ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ « Համագործակցային մեթոդների առավելությունները պատմությունը ուսումնասիրելիս »

ԱՌԱՐԿԱ՝ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Լուսինե Համբարձումյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Նորավանի միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռուզաննա Խաչատրյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածական մաս (նպատակ, խնդիրներ) _____3

Գրական ակնարկ_____5

Ընդհանուր բնութագիրը այն դասարանի, որտեղ հետազոտական աշխատանք է կատարվում_____7

Ընթացքը, վերլուծություն _____15

Եզրահանգում_____17

Գրականության ցանկ_____19

« Յուրաքանչյուր երեխա ինչ-որ
չափով հանճար է,և յուրաքանչյուր
հանճար՝ ինչ-որ չափով երեխա»:
Ա.Շոպենհաուեր

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Ինչպես գյուղական շատ դպրոցներում,այնպես էլ մեր դպրոցում, ունենք սակավաթիվ աշակերտներով դասարաններ,որտեղ աշակերտներից որոշները ունեն անտարբեր վերաբերմունք ուսման հանդեպ:
Այս հետազոտական աշխատանքը միտված է ուսուցման որակի բարձրացմանը, որի արդյունքում կարող են լուծվել մի շարք խնդիրներ:
Անհրաժշտ է փոխել դասավանդման մեթոդիկան ,օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաներ:
Հետազոտական աշխատանքի գլխավոր նպատակն է՝ ուսումնասիրել համագործակցային մեթոդների կիրառումը դասապրոցեսում , զարգացնել մի շարք հմտություններ և լուծել սովորողների ներգրավվածության խնդիրը:

Համագործակցային ուսուցումը ժամանակակից կրթության ամենից շատ ուսումնասիրված ոլորտներից է: Այս մոտեցումն առավելագույնս է համապատասխանում ուսուցման փոփոխված նպատակներին, որի անտեսմամբ հնարավոր չէ լուծել այն բազում խնդիրները, որոնք այսօր ծառայել են հասարակության առջև: Ուսուցման ավանդական և նոր մոտեցումների միասնությունը հնարավորություն կտա լուծել հասարակության առջև ծառայած գլխավոր խնդիրը նոր անձի (անհատի) ձևավորումը: Այսինքն՝ հարկավոր է դաստիարակել այնպիսի անհատ, որը ոչ միայն զինված կլինի հարուստ գիտելիքներով, այլև՝ օժտված ճանաչողական, հաղորդակցային, համագործակցային հմտություններով, ստեղծագործական մտածողությամբ և ինքնուրույն գործունեության կարողությամբ: Համագործակցային ուսուցումը տվյալների բովանդակային հարցերի սոսկ հաղորդում չէ: Այն նաև հետագա կյանքի համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ձեռք բերման, մշակույթ ձևավորելու եղանակ է: Ուստի ուսուցիչը պետք է կարողանա յուրացնել նոր գաղափարները՝ նոր պայմաններում արդյունավետ աշխատելու համար:

Թեմայի արդիականությունն այն է, որ անհրաժեշտ է ի հայտ բերել համագործակցային ուսուցման այն մեթոդները, որոնք հնարավորություն կտան ոչ միայն անհատի ընկալման մեխանիզմներին, այլև վարքագծի վրա մտավոր կառույցների զարգացմանը: Հետազոտության նպատակը և խնդիրները Հետազոտության գլխավոր նպատակը համագործակցության մանկավարժության մեթոդների կարևորության բացահայտումն է և արդիականության

հիմնավորումը, որի համար որպես հիմնական միջոց է ընտրվել համագործակցության

մանկավարժության հիմնայունները: Ելնելով առաջադրված նպատակների իրագործման անհրաժեշտությունից՝ հետազոտությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ **խնդիրները.**

1. պարզաբանել «դպրոց» սոցիալական կառույցի կառավարման հիմնախնդիրները, նպատակները

2. առանձնացնել այն մեթոդները, սկզբունքները և ոճերը, որոնք անհրաժեշտ են »դպրոց» սոցիալական կառույցի արդյունավետ կառավարման համար

3. պարզաբանել համագործակցության ուսուցման մեթոդների կարևորությունը

4. առանձնացնել համագործակցության ուսուցման այն սկզբունքները և մեթոդները, որոնք անհրաժեշտ են աշակերտակենտրոն ուսուցման կազմակերպման համար:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Համագործակցային ուսուցումը տեխնիկա է, որը թույլ է տալիս աշակերտներին միմյանցից սովորել և ձեռք բերել միջանձնային կարևոր հմտություններ:Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում:Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում: Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում:Համագործակցային ուսուցումը ուսանողների ուսուցումն ու փոխկախվածությունն ուժեղացնելու համար փոքր խմբերի օգտագործման կազմակերպված և կառուցվածքային եղանակ է: Սովորողները առաջադրանք ունեն, որն ավելի հայտնի է որպես առաքելություն կամ նպատակներ, և նրանք միասին աշխատում են այս խնդիրը կյանքի կոչելու համար: Յուրաքանչյուր անհատ ունի պարտականություններ և պատասխանատու է առաջադրանքի կատարմանը օժանդակելու համար: Բացի միմյանցից սովորելուց, աշակերտները սովորում են նաև թիմի կազմում աշխատել և սովորել միմյանցից: Համագործակցային ուսուցման հաջողությունը հիմնված է երեք փոխկապակցված գործոնների վրա.

Խմբի նպատակները. Համագործակցային ուսուցման թիմերը աշխատում են խմբի յուրաքանչյուր անդամի կատարելագործման համար ճանաչում ստանալու համար:
Անհատական պատասխանատվություն: Թիմի յուրաքանչյուր անդամ գնահատվում է անհատապես: Թիմակիցները աշխատում են միասին, բայց անհատական ուսուցման առաջընթացը կազմում է թիմի գնահատման հիմքը:
Հավասար հաջողության հնարավորություն: Անհատական կատարելագործումը նախորդ կատարողականի նկատմամբ ավելի կարևոր է, քան նախապես սահմանված միավորին հասնելը: Աշակերտը կարող է ավելի հավանական լինել հաջողության հասնել՝ աշխատելով թիմում և ավելի շատ գիտելիքներ կլանելով ուրիշներից, քան միայնակ աշխատելով:

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը:Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգին: Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու

հմտություններ: Հասարակությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը:Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ համագործակցային մեթոդների, հնարների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը:Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը,ալև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը:Ուստի մեր խնդիրն է անգլերեն լեզվի դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում:Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը:Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝ դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների տարիքից, դասարանում աշակերտների թվաքանակից, պատրաստվածության մակարդակից, շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից, ուսումնադիտողական պարագաների առկայությունից , ժամաքանակից, ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից :

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը :

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմանական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին, համապատասխան մեթոդի ընտրությունն է :

Համագործակցային աշխատանքի առավելությունները:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել:Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ):

Համագործակցային ուսուցման իմաստն է՝ յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:

Ընդհանուր բնութագիրը այն դասարանի, որտեղ հետազոտական աշխատանք է կատարվում

Հետազոտական աշխատանքն իրականացրել եմ Սյունիքի մարզի Նորավանի միջն. դպրոցի 7-րդ դասարանում, որտեղ սովորում են 8 աշակերտներ ՝ 7աղջիկ և 1 տղա: 7-րդ դասարանում հայոց պատմություն առարկային տրված է շաբաթական3 դասաժամ: Նշված դասարանում աշակերտների մեծ մասը հայոց պատմություն առարկայի նկատմամբ ունեն մեծ հետաքրքրություն, նախաձեռնող են, պատրաստակամ ավելի ծավալուն գիտելիքներ ստանալուն: Դասարանում սովորում են հիմնականում ուժեղ ընդունակություններով օժտված երեխաներ: Սակայն 3 աշակետ՝ 2 աղջիկ և 1 տղա մնացած աշակերտների համեմատ ունեն ավելի թույլ ընդունակություններ ու որպես կանոն ավելի պասիվ են դասաժամերի ընթացքում: Հարկ է նշել նաև, որ դասարանում ունեմ երեք աղջիկ երեխա, ովքեր շատ լավ մասնակցում են գործնական պարապմունքներին, վարժությունների ու խնդիրների լուծմանը: Հետազոտական աշխատանքը կատարվել է ամբողջ դասարանի աշակերտների ներգրավվածությամբ, առանձնակի շեշտ դնելով վերը նշված աշակերտներին: Դասարանում ներառական կրթության կարիք ունեցող աշակերտ չկա: Հետազոտական աշխատանքի նպատակը հիմնված է պասիվ աշակերտներին ներգրավելու ու աշակերտների մոտ վերլուծական մտածողության զարգացմանը:

Դասի պլան 1

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ 7

Թեմա՝ Անիի թագավորության թուլացումն ու անկումը

Նպատակը՝ Ձևավորել

- Բագրատունյաց թագավորության թուլացման և անկման գործընթացները, պատմական գործիչներին, և տվյյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, համեմատելու, համադրելու հմտություն
- Բագրատունյաց թագավորության տեղն ու դերը պատմության մեջ գնահատելու, արժևորելու հմտություն:

Վերջնարդյունքներ
Ներկայացնի Բագրատունյաց թագավորության պատմության առանցքային դրվագներ.
Բնութագրի Բագրատունի նշանավոր արքաների, հոգևոր գործիչների պետության անվտանգության ամրապնմանն ու հզորացմանն ուղղված ձեռնարկումները, կարծիք հայտնի նրանց գործունեության արդյունքների

վերաբերյալ
Գնահատի և արժեքի Անիի Բագրատունյաց թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները.
Կապը ՀՊՉի հետ - Հ1,Հ2, Հ25 Հ26 Հ27Հ28 Հ29 Հ30 Հ31 Հ35
Միջառարկայական կապեր՝ համաշխարհային պատմություն, գրականություն, աշխարհագրություն
Դասի տիպը- Նոր նյութի մատուցում, համակցված հարցադրումներ

Ընդհանրական խաչվող հասկացություններ
1. Համակարգ, տարածք, ժամանակ, անհատ և հարաբերություն

Ուսումնադիտողական պարագաներ, տեխնիկական միջոցներ՝

Գիրք, տետր, գրիչ, մատիտներ, մարկեր, մեծ թուղթ, գրատախտակ, քարտեզ,

Համացանց

Կիրառվող մեթոդները -Մուտքի քարտ, մտագրոհ, հարց ու պատասխան, գործնական աշխատանք:

Դասի ընթացքը

Ներածություն – Կազմակերպչական մաս. 5ր

ա. Աշակերտների հաշվառում

բ. Տնային առաջադրանքների վերլուծում

գ. Անդրադարձ նախորդ դասին, անհասկանալի հարցերի պարզաբանում.

Խթանման փուլ - Ուսուցիչը ելքի քարտի միջոցով անդրադարձ է կատարում նախորդ թեմային:

Աշակերտները դասի վերնագրին ծանոթանալուց հետո իր պատկերացումներով կփորձեն մեկնաբանել <<Անիի թագավորության թուլացումն ու անկումը>> թեմայի պատճառները 5ր.

Իմաստի ընկալման փուլ- Ուսուցիչը սահիկաշարի միջոցով աշակերտներին կներկայացնի նոր թեման. 10ր

Կշռադատման փուլ-Նոր նյութը ներկայացնելուց հետո հարց ու պատասխանի միջոցով դասարանը կամփոփի դասը՝ հասկանալու համար որքանով են յուրացրել նոր թեման: 10ր

Ամփոփում Քարտային աշխատանքի միջոցով ամփոփել թեման.5ր.

1. Ի՞նչ գիտեի
2. Ի՞նչ սովորեցի
3. Ի՞նչ կուզեի ավելին իմանալ

Գնահատում- Կատարել փոխադարձ գնահատում 7ր.

Տնայինաշխատանք - Ինքնուրույն ուսումնասիրել նոր թեման, գրել Անիի թագավորության անկման պատճառները: 3ր

Դասի պլան 2

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ 9

Թեմա՝ Խորհրդային Հայաստանի մշակույթը

Նպատակը՝ Նպաստել Խորհրդային Հայաստանի մշակույթի մասին գիտելիքների ձեռքբերմանը, մշակութային կարողունակությունների զարգացման պայմանները, առանձնահատկությունները, ձեռքբերումները

Վերջնարդյունքներ՝ Բնութագրի մշակույթի կարևոր ձեռքբերումները, արժևորի հայ մշակութային գործիչների գործունեությունը, գնահատի ՀԽՍՀ ԳԱ ստեղծումը

Խաչվող հասկացություններ՝ Անգրագիտության վերացում, դպրոցական շենքերի կառուցում, Խորհրդային դպրոցի ձևավորում

Միջառարկայական կապեր՝ Հայոց լեզու, համաշխարհային պատմություն

Մեթոդ՝ Զրույց, մտագրոհ, <<Շրջագայություն պատկերասրահում>>

Դասի ընթացքը

Կազմակերպչական մաս (2-3 րոպե)- Նախապատրաստվել դասին, ամրագրել բացակաները

Խթանման փուլ (5-7 րոպե)- Զրույցի միջոցով ուսումնասիրել սովորողների հետաքրքրությունները այդ թեմայի նկատմամբ և հարցնել, թե ինչ մշակութային

գործիչներ գիտեն

Իմաստի ընկալման փուլ(20 րոպե)- - Կիրառել <<Շրջագայություն պատկերասրահով>>մեթոդը, դասարանը բաժանել 3 խմբի, որոնց միջոցով ներկայացնել գիտության, գրականության, արվեստի գործիչներին և նրանց ստեղծագործությունները

Կշռադատման փուլ(10րոպե) - Յուրաքանչյուր խումբ կներկայացնի իր կատարած աշխատանքը

Անդրադարձ(5րոպե)- -Հանձնարարել տնային աշխատանք՝ լրացնել աղյուսակը մշակույթի վերաբերյալ և գրի առնել հիմնական հասկացությունները

Դասի տիպը՝ Խառը կամ համակցված, հարց ու պատասխան

Դասի պլան 3

Առարկա՝ Համաշխարհային պատմություն

Դասարան՝ 8

Թեմա՝ Լուսավորության դարաշրջան

Նպատակը՝ Պտկերացում կազմել լուսավորական շարժման և լուսավորյալ միապետության մասին

Վերջնարդյունքներ՝ Հասկանալ և գնահատել լուսավորյալ միապետերի դերն ու նշանակությունը, զարգացնել քարտեզի հետ աշխատելու հմտությունները

Խաչվող հասկացություններ՝ Հանրագիտարան, լուսավորության դար, իշխանության տարանջատում, հասարակական դաշինք

Միջառարկայական կապեր՝ Հյոց պատմություն, գրականություն

Մեթոդ՝ ՈՒղեղային գրոհ, Հարց ու պատասխան, տրամագիր

Դասի ընթացքը

Կազմակերպչական մաս (2-3 րոպե)- Նախապատրաստվել դասին, ամրագրել բացակաները

Խթանման փուլ (5-7 րոպե)- ՈՒղեղային գրոհ վարժությամբ առաջարկել <<Լուսավորություն, միապետություն>> կամ այլ բառեր

Իմաստի ընկալման փուլ(20 րոպե)- Ներկայացնել թագավորական իշխանության ուժեղացման պատճառները և իմանալ, թե ով է լուսավորյալ միապետը: Դիտել ֆիլմ,

10

որից հետո հարց ու պատասխանով տալ եզրահանգում

Կշռադատման փուլ(10րոպե) Դասարանը բաժանել խմբերի. 1-ին խումբը ներկայացնի << Լուսավորյալ միապետ՝ Լուի 14-ին>>, իսկ 2-րդ խումբը՝<< Պիոտր Մեծի բարեփոխումները>>

Անդրադարձ(5րոպե)- -Հանձնարարել տնային աշխատանք՝ կազմել Т-աձև աղյուսակ <<Պրուսիա և Ավստրիա>>

Դասի տիպը՝ Խառը կամ համակցված, հարց ու պատասխան, գործնական, խմբային

Թեմատիկ գրավոր աշխատանք

(Ընդգրկում է բաժին 1)

Նշել ճիշտ պատասխանը (1-8-0.25 միավոր)

1. Որտե՞ղ են բացվել Երկիր մոլորակի վրա մինչ օրս հայտնի ամենահին տաճարները
   ա)Շենգավիթի հնավայրում բ)Ազոխի քարայրի հնավայրում գ) Աղաբլուր հնավայրում
   դ) Պորտաբլուր հնավայրում
2. 2.Որքան ժամանակ է ընդգրկել միջին քարի դարը

ա) Ք.ա. 40000-20000 թվականներ գ)) Ք.ա. 12000-10000 թվականներ բ)) Ք.ա. 20000-12000 թվականներ դ) Ք.ա. 10000-8000 թվականներ

3. Ինչպե՞ս է կոչվում կենդանու, բույսի բնության երևույթների հանդեպ հավատը, ըստ որի տոհմային խմբի ծագումը կապվում է դրանց հետ:

4.Ո՞ր հույն պատմիչն է հանգամանալիորեն գրի առել հայերի ծագման մասին հունական ավանդազրույցը.

ա)Պլուտարքոսը բ)Հերոդոտոսը գ)Քսենոփոնը դ)Ստրաբոնը

5. Ո՞ր ավանդության համաձայն է հայերի ծագումը կապվում Արմենոսի անվան հետ

ա)վրացական բ)հայկական գ)պարսկական դ)հունական

6.Ո՞ր լեռներից է սկիզբ առնում Արևմտյան Եփրատը գետը.

ա) Հայկական Տավրոս գ)Ծաղկանց բ)Ծաղկավե դ) Բյուակնյան

7.Հայասայի մասին խեթական արձանագրությունների տեղեկությունները ո՞ր դարերին են

վերաբերում

ա)Ք.ա. XVII-XVI դդ. գ) Ք.ա. XV-XIIIդդ բ)Ք.ա XII-XI դդ. դ)Ք.ա XXVIII-XXVIIդդ.

8.Ո՞րն է Հայական լեռնաշխարհի կենտրոնում ձգվող լեռնաշղթան.

ա) Հայական Տավրոս բ)Հայական Պար գ)Գեղամա դ)Արցախի

Գրել ճիշտ պատասխանը (9-12-0.5 միավոր)

9.Նախապատմական ժամանակներում ներկայիս ժողովուրդների նախնիները կազմել են մեծ ընտանիքներ, որոնք գիտության մեջ կոչվեցին « մայր ժողովուրդներ»,իսկ վերջիններիս զբաղեցրած տարածքները՝«_____»:

10.Շումերական մի բնագրի համաձայն՝ « Իմաստությունն ու արվեստը ցած են բերվել _____ երկրից»:

11.«Հայասա» նշանակում է_____

12.Ըստ հայոց ծագումնաբանության հայերը սերվել են_____:

Նշել ճիշտ պատասխանը (13-16-1 միավոր)

13.Նշվածներից ընտրել երկու ճիշտ պնդում:

ա) Ք.ա.III հազարամյակում Հայկական լեռնաշխարհի բնակչությունը դեռևս պատկերացում չուներ արեգակնային տարվա մասին:

բ)Հնդեվրոպական նախահայրենիքը գտնվել է Միջագետքի և Իրանական սարահարթի հարավային շրջաններում: գ)Հայկական լեռնաշխարհում նախնադարից անցումը վաղ քաղաքակրթության տեղի է ունեցել վաղ բրոնզի դարում՝Ք.ա. IV-III հազարամյակներում:

դ)Արատտան հին արևելյան տիպի բացարձակ միապետություն էր:

ե)Ք.ա. խեթական սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Հայասա երկիրը:

14.Իրադարձությունները դասավորե՛լ ժամանակագրական հաջորդականությամբ.

ա)վայրի կենդանիների ընտելացումը

բ)նետ և աղեղի կիրառման սկիզբը

գ)ձկնորսության առաջացումը

դ)որսորդության առաջացումը

ե)մետաղից աշխատանքային գործիքների պատրաստումը

1	
2	
3	
4	
5	

15.Բերված փաստերից ո՞ր երկուսն են ճիշտ

ա)Արատտան Հայկական լեռնաշխարհի մինչ օրս հայտնի առաջին վաղ պետական կազմավորումն է

բ)Արատտան եղել է աստվածապետական կարգերով երկիր:

գ)Արատտայի կառավարմանը վերաբերող կարևոր որոշումների կայացման համար արքայի համաձայնությամբ քրմապետը հրավիրում էր գահերեց իշխանների ժողով:

դ)Արատտացիները ներմուծել են մետաղ ու թանկարժեք քարեր և փոխարենն արտահանել հացահատիկ և այլ երկրագործական ապրանքներ:

ե)Շումերում որպես քաշող ուժ օգտագործվել են ձիեր, Արատտայում՝ էշեր:

16.Ներկայացրնե՛լ հին աշխարհի հոգևոր ընկալումները Հայաստանի վերաբերյալ.

_____

17.Նշեք Մեծ Հայքի նահանգները ըստ «Աշխարհացույց»-ի: **1 միավոր**

Ա.

1.	6.	11.
2.	7.	12.
3.	8.	13.
4.	9.	14.
5.	10.	15.

Բ. Նշի՛ր Մեծ Հայքի և Փոքր Հայքի սահմանզատիչ գետը և ընդգծիր քարտեզի վրա:

0.5 միավոր

Սահմանազատիչ գետն է_____

Գ . Ն շի՛ր Մեծ Հայքի և Փոքր Հայքի տարածքները, թե յուրքանչյուրը որքան են կազմում:

0.5միավոր

Ընթացքը, վերլուծություն

Հետազոտական աշխատանքի նպատակն էր պասիվ աշակերտներին դասապրոցեսին ներգրավվելը ու աշակերտների մոտ վերլուծական մտածողության զարգացումը: Հետազոտական աշխատանքի արդյունքում դասարանում 4 աշակերտներ ամբողջովին ներգրավվեցին դասապրոցեսին, բացի այդ օգտագործվող մեթոդի միջոցով աշակերտները ինքնուրույն կարողացան փնտրել ու հավաքել նոր տեղեկություններ, մշակել ու դարձնել մատչելի ու ընկալելի դասարանի բոլոր սովորողների համար: Հետազոտական դասերի արդյունքներից քննարկելով եկա այն եզրակացության որ.

• Համագործակցային դասերի ընթացքում դիսկուսիա «քննարկում» մեթոդի միջոցով կարողացա հասնել այն արդյունքին, որ դասարանում 2 պասիվ աշակերտներ ամբողջովին ներգրավվեցին դասապրոցեսին: Կարևոր է նշել նաև, որ փորձարարական դասերը մեծ ոգևորություն առաջացրեցին բոլոր աշակերտների մոտ՝ խթանելով սովորողների ակտիվությունը, ինքնուրույն աշխատանքի կատարման կարողությունը:

• Համագործակցային դասերի ընթացքում հանձնարարել էի, որ սովորողներըաշխատեն խմբերով: Խմբային աշխատանքում դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու և հարգելու: Այս դեպքում ևս հասա այն արդյունքին, որ աշակերտները կարողացել էին ճիշտ համագործակցել միմյանց հետ, օգնել ու ուղղորդել միմյանց:

•Ներառարկայական կապի ստեղծում, քանի որ հետազոտական դասի ընթացքում կատարվել է լրացուցիչ նյութի ուսումնասիրում, որի իր մեջ ներառում է և՛ հայոց պատմություն, և՛ համաշխարհային պատմություն առարկաները:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում:Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ: Դրանք են՝

- Աշակերտների թիմային առաջադիմություն,
- Խճանկար
- Շրջվիր դեպի զույգդ
- Պրիզմա
- Խմբային հետազոտություն
- Շրջագայություն պատկերասրահում և այլն:

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները: Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը:Առավել արդյունավետ են

համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն:Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից:Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում:Ակնհայտ է , որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին: Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը:Երբ ուսուցիչն աշխատում է մեծ խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են:

Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները .

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,
- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները, ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Այսօր ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան կահավորում և պայմաններ:Դասարաններում չկան շարժական սեղաններ, խմբային աշխատանքի համար նախատեսված պարագաներ, կապի առկայություն, տեսացրիչ, էլեկտրոնային գրատախտակ և այլ:

Եզրահանգում

Հանգամանորեն ուսումնասիրելով նյութը, համակարգելով սոցհարցումների արդյունքները, ինչպես նաև օգտագործելով գիտամանկավարժական պրակտիկայի ընթացքում ձեռք բերված կառավարման փորձը՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները սպասված և ցանկալի արդյունք կտան, եթե այն հետևողական ու համբերատար ձևով քայլ առ քայլ գնա դեպի համագործակցության:

2. Դպրոցի կառավարման համակարգում տեղի ունեցող փոփոխությունները հնարավորություն կտան ժողովրդավարության տարրեր ներմուծել և նպաստել առողջ համագործակցությանը:

3. Համագործակցային կառավարումը կապահովի բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ՝ հենվելով կառավարման և համագործակցության մանկավարժության տեսությունների, սկզբունքների, մեթոդների և գործառույթների վրա:

4. «Դպրոց» սոցիալական կառույցի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար կարևորվում է ներդպրոցական կառավարման ենթահամակարգերի և սուբյեկտների համագործակցությունը, որը հումանիստական սկզբունքների շնորհիվ կձևավորի առողջ քննադատություն, ինքնավերլուծություն, ինքնակատարելագործում և ինքնիրացում:

5. Համագործակցության մանկավարժությունը կնպաստի կրթել և դաստիարակել 21–րդ դարի մարտահրավերներին պատրաստ, համակողմանի, ներդաշնակ զարգացած քաղաքացի, աշակերտների մոտ կզարգանա ինքնուրույն ապրելու ձգտումը, ձեռք կբերեն ստեղծագործական մտածողություն ու տեղեկատվության մշակման համագործակցային, ինքնաճանաչման հմտություններ և իր ճիշտ տեղը կգտնի հասարակության մեջ:

6. Համագործակցության մանկավարժության սկզբունքների շնորհիվ կձևավորվի առողջ քննադատություն, ինքնավերլուծություն, ինքնիրացում՝ նպաստելով անձի հակումների բացահայտմանը և մասնագիտական կողմնորոշմանը:

7. Համագործակցության ուսուցման մեթոդները աշակերտների կնպաստեն ինքնակառավարմանը, ինքնադրսևորմանը, ինքնակարգավորմանը, ինքնուրույնությանը, ազատությանը, ինքնաարտահայտմանը և ինքնադաստիարակությանը:

8. «Դպրոց» սոցիալական կառույցի և ուսուցչի նորարար գործունեությունը ամբողջական, կառուցողական մի համակարգ է, որտեղ բոլոր ենթահամակարգերը փոխկապակցված և ամրացված են համագործակցային կապերով:

9. Նպատակ ունենալով ճանապարհ հարթել համագործակցության ուսուցման սկզբունքների և մեթոդների համար՝ անհրաժեշտ է նպաստել «դպրոց»սոցիալական համակարգում համագործակցության ուսուցման տարրերի աստիճանական ներդրմանը:

10. Համագործակցության ուսուցման արմատավորման նպատակով անհրաժեշտ է վերացնել մանկավարժության մեջ նորարարության ճանապարհին եղած բոլոր թերություններն ու խոչընդոտները:

Գրականության ցանկ

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ 286 ուսուցիչների համար: Երևան: Կրթության ազգային ինստիտուտի հարատարակչություն: 2004 178 էջ:
2. Հովհանիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ Երևան: «Անտարես»: 2006 122 էջ:
3. Վեսա Պուրուկուրու Համագործակցային ուսուցում. վերապատրաստողի ուղեցույց Երևան: «Անտարես»: 2006 95 էջ: